ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2026 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի №234-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ԿԵՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ՋԻԲՐԵՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հունիսի 25-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասներկու ամիս ժամկետով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 10-ի «ՋԻԲՐԵՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ջիբրեյն» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №234-Ա որոշմամբ «ՋԻԲՐԵՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0785 լիցենզիայով ամրագրված «Ջիբրեյն» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը՝ որոշման մեջ և որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածում «մինչև 2026 թվականի հուլիսի 11-ը» բառերը

փոխարինելով «մինչև 2027 թվականի հուլիսի 11-ը» բառերով, իսկ «2046 թվականի հուլիսի 11-ը» բառերը՝ «մինչև 2047 թվականի հուլիսի 11-ը» բառերով:

2. «ՋԻԲՐԵՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0785 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ջիբրեյն» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2024 թվականի հունիսի 21-ի №1808 գրությամբ տրամադրված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2027 թվականի օգոստոսի 25-ը գործողության ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 9-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- հուլիսի 2026թ.